

լինողաց՝ մանաւանդ Եղիազար կաթողիկոսին՝ և այժմ չէն պահողաց, Տէր Քրիստոս ողորմեսցի. ամէն»:

Յետագայ տողերէն պիտի տեսնուի որ Ս. Աթոռոյ զահակաշէնը մասնաւոր հոգածութիւն ունեցած են Ռեմլէի Ս. Գէորգ վանքին նկատմամբ. հոն կը մնար տեսուչ մը, իբր պաշտօնեայ ուխտաւորաց հոգեւոր մխիթարութեան և հսկող վանքապատկան կալուածոց: Եղիազարէն յետոյ Շղթայակիր ևս 1728ին տուն մը գնած է իբր վանքին կալուած: 1764ին Կարապետ պատրիարք Գանձակեցիին նորոգած է նոյն վանքը, ինչպէս կը հասկցուի հետեւեալ յիշատակարանէն՝ որ կը գտնուի եկեղեցիին միակ սրահին վրայ. «Ավ. Վանքս Սրբոյն Գէորգայ որ ի Ռեմլէ բազում ծախիւք և նեղութեամբ նորոգեցաւ նորակերտ մեծ դրամքն, ի պատրիարքութեան Սրբոյն Երուսաղէմի Տեսուն Կարապետի, աշխատութեամբ Գարրիէլ և Գէորգ վարդապետաց և բոլոր միաբանի: Ի ՌՄԺԳ (=1764) թվին, որ հանդիպիք տուք զողորմիս»:

1806 ին Վանեցի Թէոդորոս պատրիարք կը յիշատակէ Ս. Գէորգի խաչկալը եւ անոր պատկերը ի յիշատակ իր հոգեւոր եւ մարմնաւոր ծնողաց. ինչպէս կը հասկցուի աւանդատան սեղանի պատկերին յիշատակարանէն:

1814 ին Թէոդորոս պատրիարքին և տեսուչ Մահալըճցի Յակոբ վարդապետի օրով Էվգարացի թուղածի մհի. Մարտիրոս և Համասփիւռ կողակիցը կը յիշատակեն Ս. Գէորգ եկեղեցիի Ս. Կարապետ խորանի խաչկալը հանդերձ եալտըզով, ինչպէս կը տեղեկանանք աւանդատան յիշատակարանէն:

1833 ին Աժտէրխանի եւ Հնդկաց նուիրակ Կարապետ արքեպիսկոպոս Եւզոկիացի (✱ 1849 դեկտ. 16) Ռեմլէի Ս. Գէորգ վանքին կը նուիրէ վանքէն դուրս մեծագոյն պարտէզ մը և ձիթատան մը (Տե՛ս Ստրագրոսիւն Երուսաղէմի, էջ 33): 1867 ին Եսայի պատրիարք՝ Աթանաս վրդ. ի ձեռամբ գնած է ուրիշ մաս մը և կցած է այս պարտէզին. 1880-1882 ին Ռեմլէի տեսուչ Բարթողիմէոս վրդ. Սատաղեան գնած է երկու մասեր ևս և ըստ առաջնոյն կցուած է վերնոյն. այժմ պարտէզին տարածութիւնը մերձաւորապէս 200 արտավար (աֆնէկ) է: Այս պարտէզին Հաշիշիէ անունը կը տրուի. իսկ Ռեմլէցիք կ'ըսեն Պայարս:

1843 յուլիս 25 ին Զաքարիա պատրիարք Կոփեցի Ռեմլէի